Կող նորա հերձեալ ջուր ւ արիւն ըզմեզ նորոգեալ,
Եօթն անգամ ձայն ածեալ որ զեւթեանց կենցաղս յաւրինեալ։

Թ. — Ահեղն աստուած մարդ եղեալ նմա պարտէր զայս ներգործել,
Արեամբն աստուծոյ ըզմեզ ի մեղաց սրբել ւ ազատել,
Զմարդիկք մահու գրաւել ի յերկինս ւ ի զկեանս հրաւիրել,
Հրեշտակաց ընկեր առնել զնա աւրհնել և փառաւորել։

ԺԱ. — Զարեւն ի յերկինս մայ և լուսոյն նա զարդ չու արայ,
Որպէս որ ճարակ չկայ ի նիւթոյն լոյսն որ հեռանայ։
Յորժամ արեւն երթայ լոյսն անճառ աղբիւր ցոլանայ,
Հուրն և ճառագայթն և նիւթն միացեալ որ երկու չէ նայ։

ԺԲ. — Այսպէս ի քրիստոս ասայ դաւանումն է սիրտ հաւատա,
Եւ մի լինիցիս թերի զու տրդա տիմար ւ անիմայ։
Ստեղծող է քրիստոս և լոյս ւ աշխարհիս տէր անտարակոյս,
Հոգի ու մարմին ու միտք որ եղեւ փրկիչ գերելոյս։
Թէ չէր միացեալ հողոյս ընդ բանին աստուած մեռելոյս,
Ապայ զկապանն ով լուծէր երբ չկայր մեզ ելնելու յոյս։

ԺԳ. — Արիք ի ծովափք իջնանք ու ձկներ բռնենք վարըմով,
Առնունք և ի տուն տանենք խորովենք զինքըն կրակով։
Զկնիկն ընդ իս էնց ասաց թէ լցաւ սրտիկս արիւնով,
Երբ ես յարեւէս ելայ թող ցամքի զինչ գետ կա ու ծով[1]։

ԺԴ. — Զինչ որ ես հետ ինձ արի չէ արել այլ ադամորդի,
Որ շիշ մի հալած ոսկի ի գետին ի վայր թափեցի։
Հազար ձի վազան բերի վազցուցի մէկ չի հասուցի,
Ինչ շահ է յետին խելացս երբ առաջին անունն աւերի[2]։

ԺԵ. — Շատ թագաւորաց մեծաց ւ իմաստուն արանց լսեցի,
Ցայն չափ չի կշտանայ մարդն աստընւորովս մինչ որ մեռանի։
Տանին գերեզման դնեն հողով իւր աչքըն լցըւի,
Ապա իւր լեզուովն ասէ թէ հերիք է այլ չի պիտի։

ԺԶ. — Իմ սիրտ վատին մի լսեր ու չարին տեղ իսկի մի տար,
Ցայստընւորիս վերայ վատն իսկի մարդոյն չի մեռար։
Այն մարդն որ ինքն վատ առնէ հանդիպի վատի մի նա այլ,
Ու զինչ որ ունի ամալ գայ ի յոտքըն փաթթի նայ այլ։

1. Ն. Գ. Դիւան Թիւ Լէ։ Այս քառեակը կը տարբերի Պ. Զօպանեանի օրինակէն, նաեւ Թիւ 241 ծանօ-թութեան մէջ հրատարակուածէն որ աւելի մօտ է իմինիս։

2. Ն. Գ. Դիւան Թիւ Լէ։ Այս տաղին սկիզբի տողը նման է իմինիս, իսկ մնացեալները՝

Որ շիշ մի դալաս ոսկի ի գետին ի վայր վաթեցի,
Հազար ձի վազան բերի, վազցուցի, այլ ոչ հասուցի,
Յետի խելքն ես ինչ անեմ երբ առջի անունն աւերի։

Նոյնին երեք փոփոխակները հրատարակուած, անդ ծան. Թ. 243։ Այս քառեակներն անշուշտ սխալմամբ նուիրուած են Պլուզի, Ֆրիկի և ուրիշներու։ Նման սխալ հեղինակութիւններ բազմիցս և ամէն տեղ կայ մեր մատենագրութեան և տաղասացութեան մէջ։